40. ՄԱՆՈՒԿ

Մեկ լավ տղեմ կէր, զինքն էր, ուր մեր. էլավ, գնաց մեկ գեղ, ասաց. «Տեհամ մո ռես, ըլնեմ որթկարած»:

Գնաց, խնդրվավ, ասաց. - Ձի անես որթկարած, շախվեմ:

Ասաց. - Ա՛յ տղա, դյու կանա՞ս որթիկներ շախես:

Ասաց. - Կանամ:

Ասաց. - Դե, գնա հեռջև որթկներաց. կիրակնեց կիրակի քյու խաց-մաց ժողովի, հմեն որթկի մեկ դիտր ցորեն տամ քյու հախ:

Էլավ, գնաց հեռջև որթկներաց: Էն որթիկ իշ կը ղռչըկեր պառաի կէհեր, էն կը հեր. տղեն կը հեր կը տփեր, բիրեր մըչ որթկներաց, իշ կը մներ ղումահիք, կը տփեր, չում կը խասցներ որթկներաց:

Էդա լավնով մեկ շափքվան մեջ խինգ, վեց որթիկ սպանեց:

Գեղական էլան, գնացին ռեսին ասին. - Մենք էն որթկարած կապուլ չընք անի. մե որթկներ հըմեն սպանեց:

Հէլան, մլուցին դյուս, գեղից խանին:

Էլավ զինք առեց մեր, էկավ մեծ քաղքիմ մեջ, ասեմ, էջմիածնա ցեղ, բնակարան իսկին, մեկ տան տնվոր իլան:

Էն լաճու անուն Մանուկ էր: Մանուկ իլավ, գնաց մըչ քաղքին ուր խմա ցախ-բան բիրեր, կտեր խացի, զինք, ուր մեր կուտեն:

Էրկու օր, իրեք օր, չորս ավուր մեջ ուր լավնով ուր բան քուբա արաց. ինք ուր մեր շախվան:

Մեկ օր իլավ գնաց փողնի մեջ, գնաց բանցր օթխի հէռջև, տեհավ աղջիկ մը փանճարից կիշկա թըխ ճամբախ. Մանուկ էդա աղջիկ տեսավ, հըլին ոսկի կեր ճակտին. եռսուն օսմանլուի ոսկի կարուկ էր ֆասի վրեն:

Մանուկ ուր սրտին մեջ ասաց. «Աստվա՛ծ, կըլնի որ էն ֆաս ինի եմ ձեռ, ես տանեմ, ըմենով շախվեմ»:

Գնաց, կայնավ դեմ փենճերին. Մանուկ ուր գդակ առեց վեր, աղջիկն էլ ուր գդակ առեց ձեռ. Մանուկ ուր քոլոզ թալեց վեր ու բռնեց. աղջիկն էլ ուր ֆաս թալեց վեր ու բռնեց. Մանուկ ուր քոլոզ ծընա զըվըռցուց, բռնեց. աղջիկն էլ զըվըռցուց, բռնեց. աղջիկն էլ զըվըռցուց, թալեց, բռնեց:

Մեկ դիր էլ սկուն, մեկել դիր Մանուկ բանցր թալեց ու բռնեց. աղջիկն էլ մեկ դիր բանցր էթալ ուր ֆաս, բռնեց: Մեկել դիր, աղջիկ ինչ բանցր էթալ տը բռներ, ընկյավ ցած:

Մանուկ առեց ֆաս ու գնաց տուն:

Գնաց մոր ասաց. - Մերիկ, բանմ գնտեր իմ. դյու էն մեղաց դրիք կըլնե՛ս:

- Չէ, - ասաց, - բե տսնամ ինչ բան է:

Ֆաս մոր շանք տվեց, եռսուն ոսկի վըր ֆասին կարուկ էր:

Ասաց. - Դյու էս մեղաց շրիք կըլնե՞ս:

Ասաց. - Չէ՛, չըմ ըլնի, ձի կա վըր քե խաց, ջյուր, շոր, չում էն օր իշ ես մեռնեմ. ես էդա մեղաց տեր չեմ ըլնի:

Մանուկ էդա ֆաս բիրեց, դրեց հեռջև ուր. էդա ոսկիք դանկով հըմեն կտռեց. ֆաս տարավ, պախեց, գնաց, չում տաս տարի էդա ոսկիքներով առուտուր արաց, վրեն ընկյավ, հավելցուց, էն ինչ հավելցուց, ուր խըմա վիրուց. եռսուն ոսկի էլ տարավ գնաց մո ոսկերիչ, տվեց կանթել, էմել դաշվան ցեղկանթեց, բիրեց. կարեց վըր ինոր ֆաս. ֆաս վիրուց, ասաց. «Ես տանեմ տամ տեր»:

Գնաց էդա աղջկա խոր դյուռ տփեց, աղջկա խեր ուր մշկուն ասաց. - Գնա՛, կյո մեկմ դյուռ կտփի, ի՞շ պտի, տուր, թո տանի:

Գնաց, ասաց. - Ա՛յ մարդ, քե իշ պտի:

Ասաց. - Չի գյործ կա խը քյո աղին, ասեմ, զըվրեմ հետ:

Դյուռ գոցեց մշակ, գնաց մո աղեն, ասաց. - Մարդմ իկե, կասի ձի գյործ կա, խապար կա քյու աղին:

Ղանչեց էլավ. - Հայ տղա, քյու գյործ ի՞, ասա՛:

Ասաց. - Աղա՛, ծընեմ տարի քե զատ չի՞ կուրիսե:

Ասաց. - Չէ:

Ասաց. - Խա, կուրիսե, դյու չըս իմնա:

Կնիկ կանչին, բերին, ասաց. - Չէ, զատ չի կուրիսե:

Մանուկ ասաց. - Խա՛, կուրիսե, ես գիտեմ, ձի տնեն ի:

- Բե՛ր, օր մերն ի, ես տ'առնեմ, օր մեր չի, տա՛ր, գնա քե:

Ֆաս շանք տվեց, ասաց. - Էսա ի:

- Եմ աղջկա ֆասն ի, - ասաց մեր:

Աղեն ասաց. - Ա՛յ տղա, էսա քյանիմ տարի ընկե մո քե:

Ասաց. - Էսա տաս տարի մո ձի ի:

Ասաց. - Տաս տարվան ի՞շ ավելվցուցիր, բե, կես քե, կես ինձիկ:

Ասաց. - Չէ, զատ վրեն չեմ իկե, քյու մալ բիրի, տվի քե:

Ասաց. - Չէ, չըլնի, էն ֆաս, դյու իշ տարեր իս, էմ աղջիկ դիվախաբեր ի, տը տանես, էմ աղջիկ պախես, չյուր ժրի:

(Աղի աչք ընկե վըր Մանուկ, մըջ ուր սրտին կասի. «էս ըսկուն անեմ, աղջիկ պսակեմ վրեն»):

Աղեն մշկուն ասաց. - Այ տղա՛, խալիչեն բե, աղջիկ դնենք ինե. դիվախար ի, թը տանե, չում ժրի:

Իլան բիրին, դրին մըջ խալիչին, փաթութին, տվին Մանուկին քյամակ, Մանուկ առեց, գնաց տուն, մոր ասաց. - Մերի՛կ, աղջիկ դիվախար ի, տվին էմ քյամակ, ծընա ասին, ես բիրի, էկա:

Մեր ասաց. - Բա՛ց, իշկանք, աղո՞ր դիվախար ի:

Էդա աղջիկ բացին, խալիչից խանին դյուս, շատ սիրական աղջիկ մ'էր, ոսկի արծաթից փելք կտեր ինոր շորեր:

Մանուկ, ուր մեր ասին. - Դիվախար չի, մենք չընք կռնա շախի, տանենք թասլիմ տեր անենք. «Մեր տուն մկներ որ կը կռվեն, ինոնց պոչեր հառքից դյուս կրյնեն»:

Էլավ Մանուկ փաթըթեց. էմել առեց, գնաց. տարավ դյուռ տփեց, էմել աղեն մշկուն ասաց. - Գնա՛, դյուռ բա՛ց. զատ մը տուր ձեռ, թո էրթա:

Մշակ գնաց, դյուռ բացեց. Մանուկ առեց աղջիկ, էկավ ասաց. - Աղա՛, ես չեմ կռնա քյու աղջիկ շախի. «էմ տուն օր ես ակռաստ կուտեմ, հընթրիս չմնա, որ հընթրիս կուտեմ, ակռաստ չմնա»:

Ասաց. - Տղա՛, էն օր իշ էն ֆաս որ Աստված քե խսմաթ ի արե, էն աղջիկ քե խսմաթ ի իլե, արե էմ ձեռ. էմ աղջիկ տամ քե:

Մանուկ իլավ, գնաց ձեռ:

Խարցնեց. - Քյո անուն իշ ի՞:

- Էմ անուն Մանուկ ի:

Գնացին, էրեց բիրին, աղջիկ պսակին վըր Մանուկին:

Աներ ասաց. - Մանո՛ւկ. դյու քյո տուն տը բիրես վը՛ր էմ տան, թի՞ ես էմ տուն բիրեմ վը՛ր քյո տան:

Ասաց. - Չի տուն չկա, էմ տուն պտի բիրեմ վը՛ր քյո տան:

- Դե, - ասաց, - գնա, առ արի վը՛ր էմ տան:

Գնաց, ուր տուն առեց, էկավ վը՛ր աներ ոջ տան:

- Մանո՛ւկ, - ասաց աներ, - ես տղա-մղա չունեմ, ձի կայ մեկ աղջիկ, որ պսակի վը՛ր քե, ունեմ յոթ տուքան, յոթ օտար մարդ դրեր եմ վը՛ր էմ տուքաններաց. ես ութնե ութ կէհամ, ինոնց փարեն կհաշվեմ, կգյամ ետ. ամանաթ քե կտամ էն տուքանքեր, էն տուն:

Մանուկ իլավ, գնաց տուքանքեր, մեկ տուքան զինք նստավ. մեկելքերաց մեջ մարդ դրեց. ուրին աղպապ ճարեց:

Աղպապքիր ասին. - Մանո՛ւկ, մարդ չգիտի թե մենք թուճար ենք, մենք տ'էրթանք Ստամբոլ, որ խալխ գիտի թի մենք զախմ թուճար ենք. ըլնենք իրիվանք:

Ասաց. - Խա, տեհանք՝ ինչխ հազ անեք:

էկավ ուր աներ ոջ ասաց. - Պտի մեր աղպապքեր էհանք թուճարութեն, որ ըլնենք, էրևանք, մենք մե խել բռնենք:

Աներ ասաց. - Ես չըմ թողե, Աստված քե տվե, կե, խմե, չու հուրն հավիտենից քե խերիք ի:

- Չէ, ասաց, - էմ աղպապքեր կեհամ, ես էլ խետքեր կեհամ:

էլան, մեմեկի քսան քիսու մալ բռնին, դրին մը՛ջ կյամուն, իլավ ինք ուր աղպապքերով կյամին թողին, գնացին:

Կյամին տարավ ֆուրթունեն, զանեց մե սար. կյամին պլավեց-կործանեց: Մանուկ մը՛նեն պրծավ. Աստված պրծուց: Մանուկ նստավ մե տախտըկի վրեն: Կյամին տախտակ քշեց, տարավ. գնաց Չինաստանա թագավորի մը դյուս ընկյավ, դյուս ընկյավ ծովու եզր, ուր շորեր խանեց, քյամեց, թալեց ծովու կրաղ, ասաց՝ թը չորնա:

Ըռութ դա նստավ, մե վիսկի արող ծովու բիրան վիսկի կանի. էս մարդ կըլնի էն մարդյու դիմաց. էն մարդ ըռութ կյո դա նստիր ի, կասի. - Քշեմ, էհամ, ձի ապով չըլի վեր:

էմել էկավ ընկյավ մարդու դիմաց, վիսկին կայնեցուց. էկավ գնաց մո էն մարդ: Մարդն էլավ ուր շորեր խագյավ, խարցուց. - Դյու ի՞շ մարդ ես:

Ասաց. - Ես չըմ գիտի իշ մարդ եմ:

Չեռ բռնից, առավ գնաց մո վիսկին:

Վիսկի արողին ասաց. - Սոված եմ, խաց բե:

Խաց դրեց, կերավ, դիմել խարցուց. - Դյու քյո ահվալ ձի ասա, դյու Չինաստանա մարդ չես:

Մանուկ ասաց. - ես ընձի տհերեմ ըսենց, չըմ գիտի իշ մարդ եմ:

Մարդ էլավ, վիսկին թողեց, Մանուկի ձեռնեն բռնեց, առավ տարավ տուն, կնկյան ասաց. - ես մե մարդ եմ տհե, տանեմ թագավորին ծախեմ, մե քենիմ ոսկի առնեմ, շախվեմ:

Տարավ, գնաց թաքավորին ասաց. - էսա մարդ կծախեմ:

Թաքավոր խարիր ոսկի տվեց, գնեց:

- Այ տղա՛, - ասաց, - քյո անուն ի՞շ ի:

- էմ անուն Մանուկ ի:

Ասաց. - ես քե գնեցի, դյու կաց քյո խըգմըթին, էմ բանին:

Երկու տարի ըսկուն մնաց, մեկ օր ասին. - Արևմտոց թաքավոր խեծել արե, տը գյա Չինաց թաքավորին կռիվ:

Թաքավոր իլավ, ուր խեծել ժողվեց, գնաց կռիվ:

Հըմենով էդա թաքավոր ճանճըխեց. բիրեց, լցեց մըչ Չինա քաղքին:

Մեկ օր էն թաքավոր թուղթ օրողկեց մո Չինա թաքավոր, ասաց. - Չինք բխո գյա, չէ՛, ես տը գյամ կռիվ, ինոր քաղաք տ'ավիրեմ:

Իլավ, զինքն, ուր դայիրեն առեց, գնաց կռիվ:

Ուր աղջիկ արաց թագավոր, դրեց ուր տեղ:

Մանուկ դրեց հէռջև աղջկան, մեկել պիթուն առեց, գնաց:

Իրեք օր գնացին կռիվ, էն հէռջև գիշեր աղջիկ ասաց. - Մանո՛ւկ, արե, էմ ոտքեր լվա:

Տաշտ բերեց էկավ, աղջկա ոտքեր լվաց:

Հիստակ լվաց, փեշկիր թալեց, սրբեց:

- Մանուկ, - ասաց, - էմ ոտքեր մաժի, չում էմ քուն տանի:

Իլավ ոտքեր մաժեց. աղջկա քյուն տարավ:

Գաստու ուր քյուն տարավ աղջիկ, տըսնե Մանուկ իշ կանի:

Մանուկ իլավ, լխեվ քյաշեց վըր աղջկան, գնաց հոդեն:

Ասեմ թաքավորի աղջկա դյուռ ըս տե ի. Մանուկի կյո ըս տե ի:

Մանուկ իլավ դյուս, գնաց դեմ աղոթրնին, ասաց. - Աստված, դյու ինձի ազատես ես դիմ էլ պրծընեմ էսա տեղեն:

Աղջիկ գնաց իտև, գյաղտիկ ականջ կանի:

Էկավ, ընկավ ուր տեղ, քնավ:

Մնաց մեկել օր հիրկուն, ասաց էմել. - Մանո՛ւկ, արե էմ ոտքեր լվա:

Մանուկ ջյուր առեց, սախեն բիրեց. աղջկան փաչեն լվաց, փեշկիր թալեց, սրբեց:

- Մանո՛ւկ, էմ ոտքեր մաժի, չում էմ քուն տանի:

Աղջիկ ուր քուն տարավ, ըսկուն խռռուց ուր մընե խանեց:

Էլավ ծածկեց, լխեվ դոշակ քեշեց վըր աղջկան, գնաց:

Գնաց դեմ աղոթրնին, էմել իլաց. - Դյու Տեր Աստված, դյու գմեն ավտե խոտե ծեն դառնաս, հըմենի սատադեն եմ. ծի փրցուցես էսա տեղեն:

Աղջիկ էմել գնաց. ականջ կանի:

Գացին քնան: Մնաց մեկ օր:

- Մանո՛ւկ, - ասաց աղջիկ, - արե՛ իմ ճուռ լվա:

Մանուկ սախ բիրեց, էկավ ինոր ճուռ լվաց:

- Մանո՛ւկ, - ասաց, - քյու ձեռ բե վեր, մաժե, բե՛, բե՛, բե՛:

- Չէ՛, - ասաց, - կարողութեն չունեմ, գյամ դարի վեր:

Ասաց. - Ընչի՞ կարողութեն չունես:

Ասաց. - էն օր իշ քյու խեր ծի գներ ի, մենք իլեր ինք քյոր-աղբեր:

- Մանո՛ւկ, - ասաց, - քյո քեֆն ի, դյու գիտես:

Մնաց էն առավտուն, ասին՝ Չինա թաքավոր գրեր ի վըր Արևմտոց թաքավորին, կոտռտեց, յոթ փաշալըղ տեղ մընեն առեց. զըվրավ, էկավ տուն:

Թաքավոր էմել բերին, դրին թախտի վրեն:

Հեվարին խարցնեց աղջիկ ուր խոր. - Դյու մեկ օր Մանուկին չըս խարցնի, ախր խոր-մոր բերած ի, ախր քյարի բերած չի:

Թաքավոր խարցնեց. - Մանո՛ւկ, քե մարդմ-կնիկ, խեր-մեր կա, չկա:

- Օր ես ասեմ, - ասաց, - դյու ընձի ազա անես:

Ասաց. - Խա, ազա կանեմ:

Ասաց. - Ասեմ, մենք Վանա կողից ենք. ես իլա, էմ աղպապքեր բռնի, մեկ մեկի քսան քիսա մալ բռնինք՝ տեհանք Ատամբոլ, կյամին զանեց, մե կյամին տարավ, տարավ զանեց մե սար. մե կյամին կործանեց, ես մենակ պրծա. Ասպած ընձի չտարավ. ես մացի մե տախտըկի, քյամին բիրեց. խանեց դյուս, վիսկի արող ծի գնտավ, բիրեց, էկավ ծախեց քե: Չի էլ կնիկ ունեմ, մեր ունեմ, զոքանչ ունեմ, էս իլավ ծնեմ ժամանակ էկեր եմ մո քե, չգիտեմ, ով ի մեռե, ով ի մնացեր:

Թաքավոր էլավ էռսուն քիսու մալ դրեց խը Մանուկին, դրեց մըջ կյամուն, կյամուչուն ասաց. - Մանուկ տանես, էհաս, մեկ նամակ բիրես, «որ ես Մանուկ սաղ խանի դյուս», որ գյաս, ես քյու նավլոն տամ:

Մանուկ իլավ բիրեց երկիր, մալ լցիր ի դյուռ, օր ուր մալ տանի տուն: Գնաց, կայնավ, տան դյուռ տփեց:

Ինոր կնկյան մեկ մշակ կեր, ասաց մշկուն. - Գնա, ո՛ր դյուռ կը տփի:

Մշակ գնաց, ասաց. - Քե իշ պինա:

Ասաց. - Էսա էմ տունն ի, ես տանտերն իմ:

Մշակ զըվրավ, խաթունին ասաց. - Մեկմ կասի՝ ես տանտերն իմ:

- Չէ, էս քսան տարի տանտեր չկա, պաթմիշ իլի գնացի, էն սութ ի, էմ իրիկ չի:

Գնաց, ասաց. - Էյ մարդ, խաթուն կասի «էմ իրիկ գնացի կուրիսի»:

- Գնա՛, ասա, գյա նստի դեմ փանճարին, գրուցք անենք:

Գնաց, քուրսին դրեց դեմ հէրդըսին հոդի մեջ, էն դսուց էկավ խետ գրուց:

Կնիկ ասաց. - Դե, զրուցի, ի՞շ մարդ ես:

Ասաց. - Ես Մանուկն եմ, պառվու լաճն եմ, իշ ես քյո ֆաս արի, գնացի, քյո խեր պսակեց վըր ինձիկ:

- Չէ, - ասաց, - դու էն մարդ չես. էն մարդ պաթմիշ էլավ:

Ասաց. - Քյո խապարն ի, կյամին պաթմիշ իլավ, ես նստա վըր մե տախտըկի, Աստված ձի տարավ, գնաց Չինաստանա մոտ ձի խանեց դյուս, ես էս օր էկեր իմ որ դյուռ բանաս, ես գյամ:

- Այ տղա, - ասաց, - քյո աներ մեռեր ի, քյո մեր մեռեր ի, քյո զոքանչ մեռեր ի, ես մենակ մնացեր եմ. ինոնց խեր-խերաթ, ժամ-պատարագ արեր եմ, արե՛ թոպա արա, դյու էն ճամբխով չէհաս, դյուռ բանամ վըր քե:

Մանուկ ասաց. - Թոպա ըլնի վըր ձիկ, որ էլ էն ճամբխով չէրթամ:

Դյուռ բացեց վըր Մանուկին, էն գյախ իշ կնիկ զՄանուկին տեհավ, ինոր մալ ապրանք իշ բիրեր խետ, իրեք տեղով կնկյան խունճան կտռավ ուրախութենե:

Էդ մալ բիրեց, քեշեց ուր տուքանքեր. վըր կնկյան ուրախցավ, խունճան կտռեց, երեսքեր պագեց:

Մանուկ նստավ տուքանքեր, մեկ ժամանակ վրեն ընցավ, մարդմ էկավ, ասաց. - Մանո՛ւկ, գերի իկի, ըլենք, հանք, մե խըմա մե մեկ գերի բիրենք, գնանք:

Մանուկ մըջ ուր սրտին ասաց. «Աստվա՛ծ, կըլնի օր էմ թաքավորի աղջիկ ըլնի, տըսնամ, առնեմ, գյամ»:

Գնացին մըչ գերիքերաց. Մանուկ տեհավ մըչ գերեքերաց Չինա թաքավորի աղջիկ:

Գերիքերաց տիրոջ ասաց. - Էսա պստիկին գին ի՞շ ի:

Ասաց. - Ինոր տաս ոսկի ի, միջնեկին քսան ոսկի ի:

- Էն մեկին քյանի՞ ոսկի ի, - ասաց:

Ասաց. - Խարիր ոսկի:

Խարիր ոսկին տվեց, աղջիկ առեց, էկավ, տարավ օդի դյուռ բացեց, մտուց հոդեն, գնաց կնկյան ասաց. - Մեկ գերի եմ բիրե, ձեռքմ՝ շոր տար ձեռք մէ՛լ նվին տար, որ մեջ քնի, օրական երկու տան կերակուր, որ քե կը խարցնի, էմ անուն չասես:

Մանուկ էկավ տուքան, առուտուր կանի:

Երկու ամիս, իրեք ամիս վրեն կընցնի, պե հեվի էլավ, էն մեկ օր նստիր էր, տրհավ, զատանց իշկաց ինե, ճանչցավ. Չինա թաքավոր զինք արե ուր աղջկա իտև, օր գինի, տանի էհա:

Դարվիշ Մանուկի տուքան ընցավ, տեհեր մըշ քաղքին, Մանուկ կանչեց. - Դարվիշ-բաբա՛, արի սդա, նիստ չու հեվարին, ձի գյործ կա խը քե:

Դարվիշ բիրեց, նստըցուց խըտ ուր կշտին:

Մնաց չու հեվարին, էլավ դյուռ շինեց. դարվիշ առըց, գնաց, ասաց. - էս օր էմ խուրն ես:

Դարվիշ ընկյավ իտև, գնաց. գնաց իշ էն հոդեն զաղջիկ մտուցե ինե, դյուռ բացեց, դարվիշ մտուց ինե:

Աղջիկ զխոր ճանչցավ, ասաց. - Այ խերիկ, քե ո՞վ բիրեց սդա:

Խեր ասաց. - Աղջիկ, քե ով բիրեց, ձի էլ էն ի բիրե:

Մանուկ կնկյան ասաց. - Էսօր մե մարդ էլ եմ բիրե. ինոնց շատ լավ կերակուր տաս - հաքմանակ, քե որ կը խարցնեն. «էն ի՞շ մարդ ի մե բիրե», էմ անուն չտաս:

Մե ամիս էն լավնով շախեց:

Մեկ օր խարցնեց կնկյան, էն մարդ իշ մե բիրեց, ընչի չգյա օդա, ըշկանք ի՛շ մարդ ի, գյա մո մե:

Գնաց Մանուկ տրհավ, ասաց. - Ծնա կասեն:

Ասաց. - Գնա՛, ասա՛, ես գյամ, տրհնամ:

Մանուկ գնաց երկու ձեռք շոր տվեց կտռել, կարել, հեվարին տարավ տվեց կնկյան, կնիկ տարավ, տվեց դարվիշին ու աղջկան, խաքան շորեր:

Թաքավոր ասաց. - Ես թաքավոր եմ, ձի չկա ծնա շորեր, էսա ի՞շ մարդ ի:

Կնիկ զըվրավ, գնաց մո Մանուկ:

Մանուկ մոմ բռնեց ձեռ, գնաց, դյուռ բացեց:

Թաքավորն ու աղջիկ էլան, Մանուկի դեմ կայնան:

Մանուկ դյուռ տփեց վրեն, ասաց. - Չէ, չում չընստեք, չըմ գյամ:

- Արի՛, - ասին, - մենք կը նստենք:

Մանուկ գնաց թագավորի ձեռ, զըվրավ, էկավ, էլ չնստավ, վըր ոտաց կայնավ, բարև բռնեց:

Թաքավոր տեղ տվեց, նստցոց, ասաց. - Դյու ի՞շ մարդ ես, էսա լավութեն մե կանես, ես քե չըմ ճանչընա:

Ասաց. - Թաքավոր ապրած, ես Մանուկն եմ, իշ դյու ընձի վիսկի արողի մոտեն գնիր:

Էնտեղ ուրախացան, մե մեկու աշկեարա իլան:

Ասաց թաքավոր. - Մանո՛ւկ, դյու ե՞րբ մե դաստուր տաս որ մենք հանք:

- Մե շաբաթմ՛ ձի մոհլաթ տվեք. ես տանեմ ձե, դնեմ ճամբխու:

Մանուկ իլավ վեր, թաքավոր իշ եռսուն քիսու մալ էր դրեր, Մանուկն էլ քառասուն քիսու ապրանք դրեց խըտ թաքավորի:

Տարավ դրեց մըչ կյամուն, ասաց կյամուչուն. - էսա մարդ տանես Չինաստան դյուս իսկես, կյամուն նավլոն չառնես, գյաս սդա, ես կյամու նավլոն տամ:

Ընկեավ հէռջև թաքավորին, տարավ մըչ կյամուն: Մանուկ էկավ ետ, բան մ'էր մոռցե տուն, տանի թաքավորին:

Թաքավոր ասաց կյամուչուն. - Որ Մանուկ մտավ կյամին, դյու կյամին թող էն մարդ տանինք խըտ մեր:

Մանուկ էն գյախ էկավ, դաստուր ուզեց. կյամիչին կյամին թողեց:

Մանուկ ասաց. - Թաքավոր ապրած, չըմ իգյա:

- Չէ, տը տանեմ խը ձիկ:

Նստան մըջ կյամուն, գնացին:

Էրկու ամիս մնաց մո թաքավոր:

Թաքավոր էլավ ճամբխեց երկիր. էլավ խարիր քիսու մալ, արծաթ-ոսկի դրեց խետ, թասլիմ արաց:

Կյամուչուն ասաց. - էսա մարդ տանես ինոր երկիր, խանես դյուս, կյամու նավլոն մընե չառնես, մեկ նամագիրմ մոտեն բիրես, նավլոն ես կտամ քե:

Մանուկ բիրեց էկավ մալ, ապրանք քեշեց, գնաց տուն: Գնաց դյուռ տվեց. - Կնի՛կ, արե դյուռ բաց, - ասաց:

Կնիկ ասաց. - Դյու էմ իրիկ չես, էմ իրիկ գնաց կուրիսավ:

- Ես Մանուկն եմ, ձի չե՞ս ճանչնաս:

- Որ դյու Մանուկն ես, խըտ էն մարդյու ինչի՞ գնացիր, դյու էրդյում էր արե, չէիեր:

- Ես գնացի, թաքավոր կյամին թողեց, գնաց:

Կնիկ դյուռ բացեց, էդա մալ, ապրանք իշ տըսավ, չորս տեղով խունճան կտռավ:

Էկան, վըր մեկմեկու ուրախացան:

Մալ ու ապրանք քեշեց ներս, դորիս գնաց, նստավ ուր տուքան՝ առուտուր արավ:

Մեկ օր տեհավ թաքավորի փոշտաճին էկավ, գնաց տուքնի դռնեն թափ ընցավ, գնաց:

Մանուկ կանչից. - Դյու ի՞շ մարդ ես:

Ասաց. - Ես իշ մարդ կըլնեմ, քե՞ իշ կա խը ծիկ:

- Ես քե խարցուցեմ, դո՞ր կէհաս, իշ մարդ ես:

Ասաց. - Թաքավորի փոշտաճին եմ, կէհամ ըռայաթի մեջ. էրկու բեռ փարա մեկ սիքից առնեմ, էհամ:

Ասաց. - Ես իրեք բեռ մե սիքից կտամ:

Գնաց փոշտաճին մո թաքավոր, ասաց. - Թաքավոր ապրած, մեկ մարդ, ասեմ, էջմիածնա, ասաց. «Իրեք բեռ փարա մեկ սիքից օրողկեմ»:

- Օրողկի էն մարդ բե, էն մարդ թաքավորի խազինա ի կառի, յա խազինա ի գնտի:

Օրողկեց. Մանուկ տարավ մո զինք, ասաց. - Դյու ի՞շ մարդ ես, որ էրկու բեռ փարա կ'օրողկես մեկ սիքից, դյու թաքավորի խազինեն ես կտռի:

Ասաց. - Աստվածն ի տվե ընձիկ:

- Ի՛շ որ ես ձե խսա արեր եմ, ըսկուն խսա արաց. «Ծնա գնացի, Չինա թաքավոր գնեց, ծնա արաց»:

Թաքավոր ասաց. - Ա՛յ տղա, գնա՛, քե դաստուր եմ տվե, ես էմ ժողովուրդին փորձի, օր մը ձի ձեռք բռնող կա՞, չէ՝ չկա, չէ, մկա իմցա որ կա:

Մանուկ էկավ տուն, վըր քուլֆըթին, ուրախցավ, Աստված քե երկար կյանք տա, դյու էլ վըր քյո լաճուն ուրախանաս: